5102
Հայերէն

№ 2000

28(075)
U-83

5102

Հ8(075)
Կ-83
2037-Կր

(Կրկնաբերան)

# ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ

Հաւաքեցեալ յուսմնէ բանա-
սիրէ համառօտաբար վ֊ մանկանց
անվարժից կամ Թերաւարժից:

Տպեալ հրամանաւ Տն Զաքարիայ
Ազգասէր Պատրիարգի:
Արդեամբք Շնորհք Մկրտիչ
Ամիրայի:
Ի պէտս ձրի վարժելը մանկանց,
Ձրիապէս:

ԻԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ.
Յամի Տեառն 1793:




Ի Մատթէոս դպրէ նորով տպագրեալ:




Այլ ինձ քաւ լիցի պարծել. բայց
միայն ՚ի խաչ Տ̃ն մերոյ Յ̃սի Ք̃սի:

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Респ. Библиотека
ՀՍՍՀ-Арм.ССР
им. А. Мясникяна
3466-73р.

## Առ Աշակերտն:

Հարց:

Դու քրիստոնեայ ես:

Պատասխանի:

Այո՛ քրիստոնեայ եմ:

Հարց: Զի՞նչ է նշանն քրիստոնէից:

Պատ: Սուրբ և պատուական խաչն քրիստոսի:

Հարց: Խաչակնքեա՛ զի տեսանեմ թէ ո՛րպէս խաչակնքես:

Պատ: Յանուն Հօր և Որդւոյ և Հոգ-ւոյն Սրբոյ:

Հարց: Ո՞վ ստեղծ զքեզ:



Պատ:

Պատ. Ա՟ծ ամենակարօղն ։
Հարց. Ինչո՞ւ համար ստեղծ ։
Պատ. Վասն այն՝ զի զինքն ճանաչի-
ցեմ և զկամքն կատարիցեմ.
և վերջապէս արքայութեանն
արժանաւորիցիմ ։
Հարց. Ո՞ր ինչ է Ա՟ծ ։
Պատ. Է ստեղծօղ երկնի և երկրի
երևելեաց և աներևութից ։
Հարց. Ա՟ծ քանի՞ է ։
Պատ. Մի է ։
Հարց. Ա՟ծային անձինքն քանի՞ք են ։
Պատ. Երեք են ։
Հարց. Երեք անձինց անուանքն զի՞նչ են
Պատ. Միոյն անուանն՝ Հայր է, երկ-
րորդին՝ Որդի է, և երրորդին՝
Հոգի սուրբ ։
Հարց. Սուրբն Հայր Ա՟ծ՞ է ։
Պատ. Այո Ա՟ծ է ։
Հարց. Որդին Ա՟ծ է ։
Պատ. Այո Ա՟ծ է ։
Հարց. Հոգին սբ Ա՟ծ՞ է ։

Պատ․ ։ Այո՛ Ա̃ծ է ։
Հարց ։ Այս ուրեմն երեք ա̃ծք են ։
Պատ ։ Ոչ երեք ա̃ծք են, այլ մի ա̃ծ և երեք անձինք ։

---

## Մասն Երկրորդ ։

Հարց ։

Այս յերից անձանց մի անձն մարդացաւ ։

Պատ ։ Այո՛ մարդացաւ ։
Հարց ։ Ո՞ր անձն մարդացաւ ։
Պատ ։ Որդւոյ անձն մարդացաւ ։
Հարց ։ Հայր ևս մարդացաւ ։
Պատ ։ Ոչ ։
Հարց ։ Հոգին ս̃բ ևս մարդացաւ ։
Պատ ։ Ոչ ։
Հարց ։ Այս ո՞ր անձն մարդացաւ ։
Պատ ։ Սա միայն որդւոյ անձն մար-դացաւ ։
Հարց ։ Մարդացաւ ասելն զի՞նչ ասել է
Պատ ։ Մեզ նման կատարեալ մարդ եղև

եղև աւել է. մարմին առնելովն ՚ի մաքուր յարենէն կուսին Մարիամու:

Հարց: Մարմին առնողն ո՞վ է:

Պատ: Բանն Աստուած, որ է միածին որդին:

Հարց: Զի՞նչ է առեցեալն:

Պատ: Հոգի, միտք, և մարմին. որք են մարդկայինք:

Հարց: Զ խա՞ռն առօղն և առեցեալն լինին մի անձն և մի բնութիւն:

Պատ: Վասնզի բանն ած այնպէս միաւորեաց ընդ անձին և բնութե իւրում զմարդկութիւնն որպէս մարմին մեր միաւորեալ է ընդ հոգւոյ մերում, և մի բնութի եղեալ է ընդ նմա առանց շըփոթման: Այնպէս և մարդկութիւնն միաւորեցաւ ընդ անձին և ընդ բնութեան բանին աստուծոյ. և մի ած ամարդկային բնութիւն եղև ընդ նմա, առանց



շփոթ

շփոթման և առանց փոփոխման։

Հարց։ Յի՟ ասելն զինչ ասել է։

Պատ։ Փրկիչ ասել է. զի փրկեաց զմեզ ՚ի ձեռաց սատանայի, և ՚ի տանջանաց դժոխոց։

Հարց։ Քրի՟ ասելն զինչ ասել է։

Պատ։ Օծեալ ասել է, վասն զի բանն աստուած մարդացեալ օծեցաւ ՚ի հօրէն ա՟յ հոգւովն սրբով. որպէս պետրոս առաքեալն ուսուցանէ. (Գործ՟. Ժ՟։)

Հարց։ Տէրն մեր յի՟ քի՟ յորում աւուր ծնաւ։

Պատ։ Ի վեցումն աւուրն յունվարի ամսոյն

Հարց։ Յումմէ ծնաւ։

Պատ։ ՚Ի կուսէն մարիամու. որպէս ՚ի վերն ասացաւ։

Հարց։ Մարիամ ա՟ծածինն կոյս մնաց յետ ծնանելոյն։

Պատ։ Այո, վասն զի անսերմն յղացաւ, և անապականաբար ծնաւ վ՟յ յետ ծնանելոյն կոյս մնաց։

Հարց: Ի՞նչ ըստ աստուածութեան ծնեալ էր
՚ի հօրէ:
Պատ: Այո՛ ծնեալ էր:
Հարց: Իսկ ըստ մարդկութեան ծնաւ ՚ի մօրէ:
Պատ: Այո՛ ծնաւ:
Հարց: Յառաջին ծնունդն ո՞ւր էր:
Պատ: Անժամանակ և անմայրաբար ծը
նունդ առանց մօր:
Հարց: Երկրորդ ծնունդն ո՞ւր էր:
Պատ: Ժամանակեայ. և մարմնով ծը
նունդ առանց հօր:
Հարց: Ի՞նչ քանի՛ տարի շրջագայե-
ցաւ ՚ի վերայ երկրի:
Պատ: Երեսուն և երեք տարի ու կէս:
Հարց: Այնքան ժամանակ զի՛նչ արար:
Պատ: Աւետեաց հետևողաց իւրոց զճա-
նապարհն ճշմարտութեան:
Հարց: Յետ այնքան ժամանակի կա-
տարմանն զի՛նչ արար:
Պատ: Եկն կամաւ ՚ի չարչարանս, խա-
չեցաւ, և մեռաւ վասն մեր,
ըստ առաքելոյն, Թէ Քրիստոս մեռաւ

վասն մեղաց մերոց, և այլն:

Հարց: Ընդէ՞ր մեռաւ:

Պատ: Վասն փրկութեան մերոյ:

Հարց: Յորո՞յ վերայ մեռաւ:

Պատ: ՚Ի վերայ խաչափայտին:

Հարց: Եթէ քրիստոս աստուած էր զիա՞րդ մեռաւ:

Պատ: Ոչ ասեմ թէ ա՟ծային բնութեամբն մեռաւ, այլ ստացեալ մարմնովն, այսինքն անձնաւորեալ մարդկութեամբն. վասն որոյ և ասի ա՟ծ խաչեցաւ և մեռաւ:

Հարց: Զկնի մահուանն զի՞նչ արարին զմարմինն քրիստոսի:

Պատ: Առին ՚ի խաչէն. և եդին ՚ի նորափոր գերեզմանի անբաժանելի ա՟ծութեամբն:

Հարց: Քանի՞ օր մնաց ՚ի գերեզմանի:

Պատ: Երեք օր:

Հարց: Որո՞վ էջ ՚ի դժոխս:

Պատ: Բանական հոգւովն:

Հարց: Յորժամ էջ ՚ի դժոխս զի՞նչ



արար:

արար ։

Պատ ։ Աւերեաց զդժոխս, և ազատեաց զհոգիսն՝ որք էին ՚ի բանտին ։

## Մասն Երրորդ ։

Հարց ։

Սուրբ եկեղեցի ասելն ինչ ասել է ։

Պատ ։ Եկեղեցին է ժողովումն ամենայն հաւատացելոց քրիստոնէից որք միաբանեալք են յանուն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ ։

Հարց ։ Զինչ է խորհուրդ եկեղեցւոյ ։

Պատ ։ Ի ազատութիւն հոգևոր ։

Հարց ։ Քանի՞ք են ։

Պատ ։ Եօթն են ։

Հարց ։ Զի՞նչ են ։

Պատ ։ Մկրտութիւն ․ Դրոշմ ․ Հաղորդութիւն ․ Ապաշխարութիւն ․ Պսակ ․ Ձեռնադրութիւն ․ և վերջին օծումն քահանայից ։

Հարց: Մկրտութիւնն զի՞նչ է:

Պատ: Ի լուացումն արտաքին մարմնոյ. և մաքրումն ներքին հոգւոյ. և ազատումն յսկզբնական մեղաց

Հարց: Դրոշմն զի՞նչ է.

Պատ: Ի հաստատութեան խորհուրդ ՚ի հաւատս քրի, և կնիք ճանաչման. որ տուեալ լինի առ ՚ի զօրացուցանել. և քաջացուցանել մարդն. և լինել զինուոր քրիստոսի:

Հարց: Հաղորդութիւնն զի՞նչ է.

Պատ: Ի մարմին և արիւն տեառն մերոյ յսի քրի. և կերակուր հոգւոր, որ և վերջապէս տայ մեզ ժառանգել զկեանս յաւիտենականս:

Հարց: Ապաշխարութիւնն զի՞նչ է:

Պատ: Ի զանցեալ չարիսն լալ և ղլալի իրս մի ևս գործել. կամ դարձումն ՚ի մեղաց, և գտանել վերստին զկորուսեալ շնորհսն:



Հարց:

Հարց: Քահանայութիւնն զի՞նչ է:

Պատ: Նա՛ հոգևոր իշխանութիւն իմն որով կարող է մատուցանել զպատարագ. նաև զայլ խորհուրդս կատարել:

Հարց: Պսակն զի՞նչ է,

Պատ: Նա խորհուրդ եկեղեցւոյ, որ 'ի բաց բառնայ զշնութիւնն և զպոռնկութիւնն. և անլուծանելի կապանօք կապէ զայրն և զկինն ընդ իրեարս վասն փրկութեան իւրեանց: ծնանիլ և սնուցանել զորդիս 'ի պաշտաման աստուծոյ:

Հարց: Վերջին օծումն քահանայից զի՞նչ է:

Պատ: Նա՛ պատիւ քահանայութե՛ կարգի

Հարց: Ուստի՞ առեալ է եկեղեցին մեր զայս:

Պատ: 'Ի սրբոյն Դիոնէսիոսէ արիսպագացւոյն, որ 'ի մէջ գրքին յաղագս եկեղեցական քահանայա



պե—

պետութեան 'ի գլուխ. Է. 'ի
մասն, Բ, ասէ, Թէ առաքելա
կան աւանդութիւն էր զորբա
գրան ննջեցեալսն օծանել:

Հարց: Առաքինութիւնն զի՞նչ է:

Պատ: Է՛ ունակութի՟ մտաց զոր ընդու
նի հոգին, և լինի բարեգործ:

Հարց: Քանի՞ք են:

Պատ: Եօթն են:

Հարց: Որպիսի՞ք են այս զոր լսեմ:

Պատ: Հաւատ. Յոյս. Սէր. Արիու
թն. Արդարութիւն. Խոհեմու
թիւն. և Ողջախոհութիւն:

Հարց: Հաւատն զի՞նչ է:

Պատ: Է՛ պարգև մի հեղեալ 'ի մեզ
յաստուծոյ, զինովաւ ճանա
չեմք զա՟ծ ամենազօր և ստեղ
ծիչ լեալ:

Հարց: Յոյսն զի՞նչ է:

Պատ: Յոյսն է ըստոյգ ակնկալութիւն
հանդերձեալ բարեացն. որ տա
լոցէ ա՟ծ յաւուրն հատուցման:

Հարց: Սէրն զի՞նչ է:

Պատ: Նա՛ ունակութիւն մտաց. որով սիրեմք զԱստուած վասն բարերարութեանն. և զընկերս մեր հաւասար մեզ վասն Աստուծոյ:

Հարց: Արիութիւնն զի՞նչ է:

Պատ: Նա ընդդէմ լինել փորձութեանց աշխարհի. և դժուարին կրիցն հանդուրժել:

Հարց: Արդարութիւնն զի՞նչ է:

Պատ: Նա հաւասարաբաշխումն ի հոգի և ի մարմին և ոչ իւրայուցանել զինչսն այլոց յինքեան:

Հարց: Խոհեմութիւնն զի՞նչ է:

Պատ: Նա ընտրութիւն առնել ի մէջ բարւոյ և չարի չխաբել զոք և չխաբիլ յումեքէ:

Հարց: Ողջախոհութիւնն զի՞նչ է:

Պատ. Նա ի բաց մերժել յինքենէ զամենայն մարմնական հեշտութիւնս և ցանկութիւնս որք պատահին:

Հարց: Քանի՞ք են պարգևք հոգւոյն

սրբոյ :

Պատ : Եօթն են . այսինքն . Իմաստութիւն . Հանճար . Խորհուրդ . Զօրութի̃ . Գիտութի̃ . Ա̃ծ-պաշտութիւն . և Երկիւղ ա̃յ :

Հարց : Քանի՞ք են գործք ողորմութե̃ որք ՚ի յիշատակ գան յաւուրն դատաստանի :

Պատ : Եօթն են . այսինքն ,
Կերակրել զքաղցեալս :
Արբուցանել զծարաւեալս :
Զգեցուցանել զմերկս :
Ժողովել զօտարս :
Տեսանել զհիւանդս :
Այց առնել բանտարգելոց :
Թաղել զմեռեալս :
Այսոքիկ են մարմնաւոր ողորմութիւնք :

Հարց : Գո՞ն ևս հոգևոր ողորմութի̃ք :

Պատ : Այո կան այլ ևս եօթն հոգևոր ողորմութիւնք . այսինքն ,
Խրատել զերկմիտսն :

 ուս

Առաջնորդել տգիտաց ·
Կշտամբել զմեղաւորս ·
Մխիթարել զտրտմեալս ·
Թողուլ զպարտս ·
Յանձն առնուլ զվիշտս ·
Աղաչել զԱճ վս կենդանեաց
և մեռելոց, և վասն մեղաց ։

Հարց ։ Քանի՞ք են օրինացն բանք · կամ 'ի ձեռն որո՞յ ետ Աճ զնս ։

Պատ ։ Տասն են բանք օրինացն Այ, և 'ի ձեռն Մովսէսի ետ 'ի լեառն Սինայի ։

Հարց ։ Ասա՛ մի ըստ միոջէ զի գիտացից։

Պատ ։ Առաջինն՝ Ես եմ Տէր Աճ քո
և մի՛ եղիցի քեզ այլ Աճ բաց
յինէն · և մի՛ դիցես զանուն Այ
քո 'ի վերայ սնոտեաց ։
Երկրորդն՝ մի՛ արասցես քեզ
կուռս ըստ ամենայնի նմանու-
թեան · յերկինս 'ի վեր և յեր
կիր 'ի խոնարհ ։
Երրորդն՝ յիշեա՛ զի սրբեսցես

զօր շաբաթուն, որ մեզ կիրակի ։
Չորրորդն՝ պատուեա զհայր քո
և զմայր քո ։
Հինգերորդն՝ մի սպանաներ ։
Վեցերորդն՝ մի շնար ։
Եօթներորդն՝ մի գողանար ։
Ութներորդն՝ մի սուտ վկայեր
զընկերէ քումմէ ։
Իններորդն՝ մի երդնուր սուտ
յանուն տեառն այ քոյ ։
Տասներորդն՝ մի ցանկանար կը
նոջ ընկերի քոյ․ և մի տանն նո
րա․ և մի ընչից նորա․ և մի ամ
իրաց նորա որք նորա իցեն ։
Հարց ։ Քանիք են ազգք մեղաց ։
Պատ ։ Երկու․ այսինքն, սկզբնական․
և ներգործական ։
Հարց ։ Զինչ է սկզբնականն․ և զի՞նչ
ներգործականն ։
Պատ ։ Սկզբնականն ՚ի հօրէն մերմէ
ադամայ սերեալ ունիմք ամենե
քեան որք ջնջին մկրտութե ։

Իսկ ներգործականն յետ մկըր_տութեանն կամօք մերովք որ գործեմք այն է ։

Հարց։ Ներգործականն ՚ի քանիս բա_ժանի ։

Պատ։ Յերիս. այսինքն, մահացու. ներելի. և փոշետեսակ ։

Հարց։ Մահացուն զի՞նչ է ։

Պատ։ Էն այն՝ զի յորում վերայ գը_տանիցի՝ զնա մահացուցանէ ։

Հարց։ Ներելին, և փոշետեսակն զի՞նչ է ։

Պատ։ Նոքա են, զի եթէ մարդ ոք գործէ և մոռանայ. կամ թե_թևապէս կրէ զապաշխարանքն կամ լիապէս չկատարէ թո_ղու ած. վասն զի ներելի և փոշետեսակ ասելն՝ խիստ թե_թև մեղք ասել է. որպէս ան_ձանքն պարզապէս յայտնեն ։

Հարց։ Մահացու մեղք քանի՞ք են ։

Պատ։ Եօթն են. այսինքն, Հպարտու_թիւն.

թիւն. Նախանձ. Բարկութի.
Ծուլութիւն. Ագահութիւն.
Որկրամոլութի. Բղջախոհութի:

Հարց: Վրէժխնդիր մեղք քանի՞ք են

Պատ: Են այսոքիկ: Անմեղ ըսպա-
նումն. Արուագիտութի. Զըր
կանք աղքատաց. Հատանել
զվարձս մշակաց: Զորքս այսո-
քիկ՝ են սարսափելիք. յորոց
տէր ա̃ծ փրկեսցէ. Ամէն:

Հարց: Քանի՞ք են առաքինութիւնք
ընդդէմ սոցա:

Պատ: Եօթն են. այսինքն, Խոնարհու-
թիւն ընդդէմ Հպարտութե.
Բարեհաճութիւն ընդդէմ Նա-
խանձու. Հեզութի ընդդէմ
Բարկութե. Առատատուութի
ընդդէմ Ագահութեան. Արթու-
թիւն ընդդէմ Ծուլութեան.
Պահեցողութիւն ընդդէմ Որկ-
րամոլութեան. Ողջախոհութի
ընդդէմ Բղջախոհութեան:

Հարց: Մեղքն քանի՞ բանիւ կու-գործուի:

Պատ: Երեք. այսինքն, Խորհրդով. Բանիւ. և Գործով:

Հարց: Պատմեա՛ մի ըստ միոջէ որ իմանամ:

Պատ: Խորհրդովն մեղանչել կոչի յորժամ 'ի սրտի մերում չար խորհիմք:

Բանիւն այն է, երբ որ քիւֆր հանեմք 'ի բերանոյ:

Գործովն որ ձեռօք, կամ ոտիւք կատարեմք, և'ի գլուխ ածեմք:

Հարց: Քանի՞ք բանք են որ զմարդն վախեցնեն 'ի մեղս գործելոյ:

Պատ: Չորս. այսինքն, Մահն. Ահեղ դատաստանն. Հրդեհն դժոխքն. և անճառելի Արքայութիւնն:

Հարց: Մի միայն զքրիստոնէական հաւատոյ զորպիսութիւնն ճանաչելով փրկուի՞ն համարիմք թէ ո՛չ:

Պատ: Մի միայն ճանաչողութեամբ



ո՛չ

ոչ հասանիմք։

Հարց։ Ընդէ՞ր համար։

Պատ։ Վասն այն, զի հաւատք առանց գործոյ՝ մեռեալ մարդոյպէս է. որպէս սուրբ առաքեալն վկայէ, թէ հաւատք առանց գործոց մեռեալ է։

Հարց։ Ո՞ինչ են բարի գործքն։

Պատ։ Աղօթք. Պահք. և Ողորմութիւնք։

Հարց։ Գիտե՞ս զտէրունական աղօթքն

Պատ։ Այո՛ գիտեմ։

Հարց։ Ասա՛ զոր տեսանեմ։

Պատ։ Հայր մեր որ յերկինս ես սուրբ եղիցի անուն քո. եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո՝ որպէս յերկինս և յերկրի զհաց մեր հանապազորդն՝ տուր մեզ այսօր. և թո՛ղ մեզ զպարտիս մեզ՝ որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց. և մի՛ տանիր զմեզ 'ի փորձութիւն. այլ փրկեա՛ 'ի չարէ. Զի քո է

արքայութիւն և զօրութիւն
և փառք յաւիտեանս ամէն:

Հարց: Գիտե՞ս 'ի դէմս որբուհւոյ Ած-
ածնին սահմանադրել զաղօթքն

Պատ: Այո՛ գիտեմ:

Հարց: Ասա՛ զոր լուայց:

Պատ: Ընկալնիմք առաջի քո տիրա-
մայր սուրբ Աստուածածին և
աղաչեմք զանարատ զկոյսդ.
բարեխօսեա՛ վասն անձանց մե-
րոց. և աղաչեա զՈրդին ո-
դիդ. փրկել զմեզ 'ի փորձու-
թենէ և յամենայն վտանգից
մերոց: Որ արձակիչդ ես կա-
պելոց պարգևատու ամենե-
ցուն. այսօր հայցմամբ ծե-
րունւոյն՝ արձակեա՛ և զիս ընդ
բազմամբս 'ի կապանաց մահու
'ի կեանսդ յաւիտենից ամէն:

Հարց: Յորժամ քահանայն առէք
կերէք ասէ՝ դու զի՞նչ ասել
պարտիս:

Պատ։ (զաղօթս զայս.) Տ՟ր մարդա-
սէր, որ առաքեցեր զորդիդ
քո միածին, և նորին ա՟ծային
կարողութեամբն՝ զհայրական
դըթութիւն քո ծանեաք. վ՟ն
զի ա՟ծապէս էր խաչին կամօք
վ՟ն մեր. սոյնպէս ժուժկալու՟թ
երեք օրեայ թաղմանն. և երա-
նաշէտ յարութ՟ն. և ա՟ծային
համբարձու՟մն փառօք հօրդ. և
ընդ աջմէ քումմէ նստիլն. զորս
հաւատամ և երկիրպագանեմ։

Հարց։ Որքան է աստիճան հաւատոյ։

Պատ։ Երկոտասան բանք առաքելոցն
որք են ՚ի հաւատամքն։

Հարց։ Ասա՛ զհաւատամքն։

Պատ։ Հաւատամք ՚ի մի ա՟ծ հայրն ա-
մենակալ. յարարիչն երկնի և երկրի
երևելեաց և աներևութից։
2 Եւ ՚ի մի տ՟ր յ՟ս ք՟ս որդին ա՟յ ծնեալն
յա՟յ հօրէ միածին. այ՟՝ յէու՟է հօր։
Ա՟ծ յա՟յ. լոյս ՚ի լուսոյ. ա՟ծ ճշմարիտ.
յա՟յ ճշմարտէ՝ ծնունդ և ոչ արարած։

Նոյն ինքն ՚ի բնութէ հօր. որով ամ՟
ինչ եղև յերկինս և՚ի վերայ երկ-
րի՝ երևելիք և աներևոյթք։
3 Որ յաղագս մեր մարդկան և վ՟
մերոյ փրկութե՟ իջեալ ՚ի յերկնից,
մարմնացաւ մարդացաւ ծնաւ կատա
րելապէս ՚ի մարիամայ ս՟րբյ կուսէն
հոգւոյն սրբով։ Որով էառ զմարմին
զհոգի և զմիտ. և զամ՟ որ ինչ է ՚ի
մարդ. ճշմարտապէս և ո՛չ կարծեօք։
4 Չարչարեալ խաչեալ թաղեալ։
5 Յերրորդ աւուր յարուցեալ։
6 Ելեալ ՚ի յերկինս նովին մարմնով
նստաւ ընդ աջմէ հօր։
7 Գալոց է նովին մարմնովն և փառօք
հօր՚ի դատել զկենդանիս և զմեռեալս.
որոյ թագաւորութե՟ ո՛չ գոյ վախճան։
8 Հաւատամք և՚ի սուրբ հոգին. յանեղն
և՚ի կատարեալն որ խօսեցաւ յօրէնս
և՚ի մարգարէս և յաւետարանս. որ
էջն ՚ի յորդանան՝ քարոզեաց զառա
քեալն և բնակեցաւ ՚ի սուրբսն։


Հա

9 Հաւատամք և ի մի միայն ընդհանրական և առաքելական եկեղեցի։
10 Ի մի մկրտութիւն. յապաշխարութիւն
ի քաւութիւն և ի թողութիւն մեղաց։
11 Ի յարութիւն մեռելոց. ի դատաստան
աւիտենից հոգւոց և մարմնոց։
12 Յարքայութիւնն երկնից և ի
կեանսն յաւիտենականս։

Մինչև ցայս են հաւատոյ բանք։

Իսկ որք ասեն՝ էր երբեմն յորժամ ոչ էր որդի. կամ էր երբեմն՝ յորժամ ոչ էր սուրբ հոգի. կամ թէ՝ յոչ էից եղեն. կամ յայլմէ էութենէ ասեն լինել զորդին Աստուծոյ և կամ զսուրբ հոգին. և թէ՝ փոփոխելիք են կամ այլայլելիք, զայնպիսիսն նզովէ կաթուղիկէ և առաքելական եկեղեցի

Ի սրբոյ Լուսաւորչէն Տեառն Գրիգորէ
Յաւելեալ։

Իսկ մեք փառաւորեսցուք որ յառաջ քան զյաւիտեանս. երկրպագանելով սրբոյ Երրորդութեանն և՛։

Աղօթք առաւօտեան։

Եղբարք սիրեցեալք օրհնեսցուք միաբանութեամբ՝ զարարիչն ամ արարածոց զամենակարող զհայրն ած : օրհնեալ է ած :

Գովեսցուք և զծնեալն ՚ի հօրէ՝ նախ քան զյաւիտեանս . զմիածին որդին զբանն ած : օրհնեալ է ած :

Աստուածաբանեսցուք և զբղխեալն ՚ի հօրէ՝ փառակից որդւոյ զճշմարիտ սբ հոգին ած : օրհնեալ է ած :

Միոյ տէրութեան և երեք անձնեայ ածութեան՝ գոհացողական ձայնիւ տացուք զփառս՝ և զերկրպագութիւն յաւիտեանս յաւիտենից։ Ամէն։

Նոյնում սրտիւ աղաչեսցուք զած, զի ոչ ծածկեաց զլոյս առաւօտու յարարածս իւր, ծագեսցէ և այժմ զլոյսն իմանալի շնորհաց յանձինս մեր : Ամէն :

Սրբեալ մաքրեսցէ զհոգի և զմարմինս մեր : Ամէն :

Լուսաւորեսցէ զաչս մտաց մերոց
ած 'ի խմանալ զզօրութիւն ածային
պատուիրանաց : Ամէն :
Աստուածճանաչականաւ հմտանալ. Գործ-
նականաւ զօրանալ. և Տեսակա-
նաւ զուարճանալ : Ամէն :
Փառաւորեսցուք զանունն ամենայն
երրորդութեան Հօր և Որդւոյ և Հոգ-
ւոյն սրբոյ յաւիտեան : Ամէն :

Աշխ. երեկոյեան :

Գոհացողական ձայնիւ մտա-
բանութբ տացուք այ մերոյ :
զփառս և զգոհութիւս. օրհնեալ է ած
Որ արժանի արար զմեզ 'ի տուընջեանս
այսմիկ, օրհնել և փառաւորել զա-
հաւոր և զսոսկալի զանունն իւր սբ :
օրհնեալ է ած :
Որ առաջնորդեաց մեզ խաղաղութբ
և անդորրութբ հասանել 'ի ժամ
երեկոյիս : օրհնեալ է ած :
Գեր ընտիր և սբազան մեհեանին


մերոյ

մերոյ տ՟ն՝ (այս անուն) զկեանս երկար՝
խաղաղութ՟ պարգևեսցէ ։ Ո՛ղմն ։
Եւ՛ զառաջին պատճառն մեծի դըպ-
րատան յայսմ յիշատակիս ժողո-
վեալ աղքատիկ մանկանցս տ՟եայն ու
օնի ծրի կրթութես մերոյ զՅակոբ
Աճառուն Պատրիարքն կոստանդնու-
պօլսի վերակոչելով յանմահութի
խառնեալ յերամս արդարոց․ և
ընդ քերուբէ որ բանակս հրեշտակաց
զուարճացուսցէ ։ Ո՛ղմն ։
Ընդ որում երկրորդապէս զյարդա-
րօղ պատճառն նորուն յիշատակի,
և այլ նորոգ հաստատելոց դպրա-
տանց զգերապատիւ և մ՟ծարեալ Զ․ա-
քարեայ երջանկազարդ և ազգասէր
Պատրիարքն, երկար կենօք պահե՛.
և պարուցն երանականաց արժանա-
ցուսցէ ։ Ո՛ղմն ։
Ո՛ղմ և զմեծաջան աշխատօղ, ար-
դեանց հաւաքօղ. և մեծաւ հոգա-
բարձութ՟ կարի գուն գործօղ զշնորհ


Աը

Մըկրտիչ ամիրայն եւրովքն զար-
մուք՝ բարգաւաճած կենօք փառաւոր
դեսցէ : Ամէն :
Նաեւ զերեւելի զիշխանս ազգիս
հայոց, որք գլխաւոր ողորմութ՟ իւ-
րենց, հոգեւորաց՟ս կրթել եւ վարժել
տալոյ եղեն մեզ պատճառ զա՟մին
զնս՟ պահեսցէ անսասան 'ի ներկայու-
մս, եւ 'ի հանդերձելումն ընդ իշխա-
նացն խասահակոյ եւ համաղասապայ
ուրախացուսցէ, հանդերձ ազգօք
եւ ժառանգակցօք : Ամէն :
Զա՟ծ ագուամար ո՟ք ժողովս եւ զմխա-
բանութիւս մեր օրհնեսցէ, եւ յամ՟ ե-
րեւելեաց եւ յաներեւութից թշնամեաց
զերծուցեալ ապրեցուսցէ : Ամէն:
Հաւատով խնդրեսցուք 'ի նմանէ՝
զի զմնացուած ժամանակս կենաց
պանդխտութե՟ մերոյ՝ խաղաղութ՟
պահեսցէ : Ամէն :
'Ի չարեաց փրկեսցէ, 'ի մեղաց ազա-
տեսցէ, 'ի պիղծ խորհրդոց 'ի բա-
նից եւ 'ի գործոց սրբեսցէ : Ամէն :

'ի գեհեռնայնոց զարհուրանաց և'ի
ցնորմանց բևեռաւորայ զերծուսցէ. և
զզօրութիւն խաւարասէր իշխանին
խորտակեսցէ : Ամէն :

Նա՛ զիշխանութիւն նորա ընկճեսցէ .
և զատամունս նորա փշրեսցէ . 'ի սահ-
մանաց և'ի բնակութեանց մերոց զնա
'ի բաց հալածեսցէ : Ամէն :

Զ.բանակս հրեշտակաց առ 'ի պահ-
պանութիւն մեզ առաքեսցէ , 'ի նոսա
յանձն և ապաստան արասցէ : Ամէն:

Առաւօտու օրհնութեանցն և փառա-
բանութեանցն զմեզ արժանացուսցէ .
հաւատով յուսով և սիրով զարդա-
րեսցէ : Ամէն :

'ի գործս առաքինութեան և ա̃ծպաշ-
տութեան արիացուսցէ . ամօթխածութ̃
և պարկեշտութ̃ զզայարանս մեր
ամրացուսցէ : Ամէն :

Շնորհօք և մարդասիրութ̃ ամենա̃բ
երրորդութեան՝ Հօր և Որդւոյ և Հոգ-
ւոյն ս̃բոյ որում փառք յաւիտեանս.
Ամէն .

Փոխ. ձայնականց ողջերթախօսութեան երբ ուղեւորին 'ի
Պանդխտութեան ջերեկոյեան ժամուն.



Ո՜վ քեզ քս որ հասուցեր
'ի ժամս այս զանարժանս մեր
Ո՛չ ըստ գործոցն զոր առնեսեր
այլ գթութեանդ ներե ցեր :
Ի զղջակութեան մեր կրթե ցեր .
Եւ զթերութիւնս մեր լը ցեր :
Ը՛նդ մանկանցըն զոր դըրդուե ցեր .
աշակերտացըն քոց դու ցեր :
Սիրելեացըն քոց ծառա ցեր .
Նոցին նըման լինել ա սեր :
Նըման նոցա ըզմեզ ու սո .
Եւ իմաստեւք քոյին լը ցո :
Անձուկ ճաշակսցուք մրոք 'ի լը .
որ քոյն կամացն է հաճե լը :
Շնորհեա ըզմեզ տուն պատրաստե ա-
բընակելոյդ արժան ա րա :
Յանկարգութեց ըզմեզ պա հեա .
'ի չար ընկերաց աղա տեա :
'ի մարմնական վարուց զա տեա .
առ հոգեկանն բորբո քեա :

Վարժապետէն մեր հոգե կան ․
համբերութի և երկար կեան ։
Զի անդանդաղ զմեզ վարժես ցէ ․
և զօգտակարն մեզ ուսուս ցէ ։
Թարց ձանձրութ միշտ կրթես ցէ ․
և զթերութիւնըն մեր լըց ցէ ։
Ըզհարկաւորսըն հաւա տոյ ․
որք են օգուտ մերոյս հոգ ւոյ ։
Ընկերակցացըս միա բան ․
տուր մեզ շընորհ ած և բան ։
Զի օրհնեսցուք միաբե րան ․
մինչև ՚ի կէտ յետին կոչ ման ։

## Աղօթք Տէրունական ։

Հայր մեր որ յերկինս՝ սբ եղիցի
անուն քո ․ եկեսցէ արքայութի քո ։
Եղիցին կամք քո որպէս յերկինս՝
և յերկրի ․ զհաց մեր հանապազորդ
տուր մեզ այսօր ։ Թող մեզ զպար
տիս մեր, որպ և մեք թողումք մերոց
պարտապանաց ։ և մի տանիր զմեզ
՚ի փորձութիւն ․ այլ փրկեա զմեզ ՚ի
չարէ ։ Զի քո է արքայութի և զօ_
րութի և փառք յաւիտեանս ամէն ։

Նուէր

Միաբանութեան Գրադարանին

տր. Գրիգոր Սարաճեանի կողմէ

Ստամպուլ, [illegible]

27 Մայիսի 1972

18